Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի N 993 գրությամբ ներկայացված համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 541-Ա, 2022 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 556-Ա և 2022 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 561-Ա որոշումների վերաբերյալ.

Թիվ 541-Ա որոշման 1-ին կետում կրկնակի գրառված «Անի համայնքի Հայկաձոր բնակավայրում» բառերը հանել: Իսկ որոշման 2-րդ կետում գրառված «դրամ» բառից հետո գրառել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2022 թվականի» բառերը:

Թիվ 556-Ա որոշման նախաբանում գրառված «դրույթներով» բառը փոխարինել «դրույթով» բառով:

Թիվ 561-Ա որոշման վերնագիրը և որոշման նախաբանում կատարված հղումները չեն համապատասխանում որոշման 1-ին կետով նշված բովանդակությանը /հիմք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մաս և 17-րդ հոդվածի 2-րդ մաս/:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 538-Ա որոշման վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Հարությունյան

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի N993 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի N537-Ա –N552-Ա, 2022 թվականի հոկտեմբերի 24-ի N553-Ա, 2022 թվականի հոկտեմբերի 25-ի N554-Ա, N555-Ա, 2022 թվականի հոկտեմբերի 26-ի N556-Ա-N558-Ա, 2022 թվականի հոկտեմբերի 27-ի N559-Ա - N561-Ա, 2022 թվականի հոկտեմբերի 28-ի N562-Ա, 2022 թվականի հոկտեմբերի 31-ի N563-Ա-N564-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N537-Ա որոշման դրույթում կատարված հղումը նախաբանում արդեն գրառված է։
2. N546-Ա որոշման դրույթում վարձավճարի չափը տառերով և թվերով տարբեր է գրառված։
3. N554-Ա և N558-Ա որոշումների նախաբաններում հղումները ՀՀ կառավարության որոշումների դրույթներին սխալ են գրառված։
4. N560-Ա որոշման վերնագրում «որոշման» բառից հետո անհրաժեշտ էր գրառել միայն հետևյալ բառերը՝ «մեջ փոփոխություն կատարելու մասին»։
5. N564-Ա որոշման նախաբանում հղում է կատարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուժը կորցրած դրույթի, իսկ ՀՀ կառավարության որոշմանը կատարված հղումը կիսատ է գրառված։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ թիվ 537-Ա, 540-Ա, 542-Ա, 543-Ա, 544-Ա, 545-Ա, 546-Ա, 547-Ա, 548-Ա, 549-Ա, 550-Ա, 551-Ա, 552-Ա, հոկտեմբերի 24-ի թիվ 553-Ա, հոկտեմբերի 25-ի թիվ թիվ 554-Ա, 555-Ա, հոկտեմբերի 27-ի թիվ 559-Ա, հոկտեմբերի 28-ի թիվ 562-Ա և հոկտեմբերի 31-ի թիվ 564-Ա որոշումների վերաբերյալ

1. N 540-Ա որոշմամբ շենքի լրակառուցում իրականացնելու նպատակով, ուղղակի կարգով, կառուցապատման նպատակով /սպասարկման սրահ/ քաղաքացուն տրամադրվել է բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 86.0 քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1]–րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի դրույթներին, համաձայն որոնց համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցույթով՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, իսկ հողամասը կառուցապառողին է տրամադրվել ուղղակի կարգով:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Իսկ տվյալ հողամասը օգտագործման տրամդրելու հարցի վերաբերյալ Անի համայնքի ավագանին որոշում չի կայացրել:

Բացի այդ, որոշման մեջ հղում է կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետին,

որը տվյալ իրավական ակտում չկա: Իսկ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին կատարված հղումը ավելորդ է:

Հաշվի առնելով, որ իրավական ակտը ընդունվել կամ գործել է՝ հակասելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի, հետևաբար՝ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, անհրաժեշտ է այն ճանաչել անվավեր:

2. Թիվ թիվ 546-Ա, 547-Ա, 548-Ա և 552-Ա որոշումներով օգտագործման է տրամադրվել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող և արոտ հողատեսքերի հողամասեր: Համայնքի ղեկավարի որոշումներում օգտագործման տրամադրված հողամասերի վարձակալական վճարների չափերը չեն համապատասխանում ՀՀ հողային օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասի և 94-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին:

3. Թիվ 553-Ա որոշման մեջ թերի է գրված աճուրդային եղանակով օտարվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը /հողատեսքը/:

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ թիվ 537-Ա, 542-Ա, 543-Ա, 544-Ա, 545-Ա, 549-Ա, 550-Ա, 551-Ա, հոկտեմբերի 25-ի թիվ թիվ 554-Ա, 555-Ա, հոկտեմբերի 27-ի թիվ 559-Ա, հոկտեմբերի 28-ի թիվ 562-Ա և հոկտեմբերի 31-ի թիվ 564-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ